նաստեղծը,—ըստ արժանւոյն կը գնահատէ ու կը վարձատրէ իւր մշակին գոնէ նրա յոբելեանի օրը, իսկ վարձատրութեան, մանաւանդ նիւթական վարձատրութեան՝ Մատուրեանը ահագին կարիք ունի, իբրև մշտահիւանդ, ծիւրուած, անապահով, (ինչպէս բոլոր հայ գրողները) հայ գործիչ։ Guique suum!

Ն. Ս. Տէր-Մաճուէլեան

Մոսկուա, 1910 թ. 3 ապրիլի։

ՑԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳԻՐ

Այս նամակը, որ ուղարկուած լինելով «Նոր-Դպրոց» ամսագրին իբրև նոյն ամսագրի մէջ ինձ ուղղած նամակի պատասխան, և որը յիշեալ խմբագրութիւնը, չկամենալով դիպչել իւր խմբագրի անձեռնմխելիութեան, բարեհաճեց ի ՇՆաս մանկավարժութեան մէջ գիտութեան նոր հոսանքի՝ չտպագրել, խնդրեմ զետեղէք... «Լումայ» ամսագրի մէջ։

1910 թ. 3 Մայիսի
Թիֆլիս

ՊԱՏԱՍԽԱՆ Գ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻՆ

Ձեր խմբագրութեամբ լոյս տեսնող «Նոր Դպրոցի» ներկայ տարուայ № 3-ում մի նամակ էք ուղղել ինձ։ Կարդացի Ձեր անզօր տողերը. Դուք փաստեր չունէք յօդուածիս որևէ կէտը նսեմացնելու։ Դիտմամբ յօդուածիս սկիզբը չհասկանալու էք դրել։ Բայց ինչ կայ անհասկանալի. իմ գործիքը տասնորդական սիստեմի է, Ձեր հաւանածը միաւորական սիստեմի, որի գործածութեան ՇՆասակարութիւնը դեռ չէք կարողանում գիտակցել։ Այդպիսի տրամադրութիւն ունենալով՝ ինչպէս կարող էք իմ թուաբանական գործիքի նշանակութիւնը և դիրքը որոշել։

Յօդուածները իւրի յատկութիւն հօ չունին, որ մի պատառ վերցնելով՝ նրա արժէքը գնահատէք։ Միամիտ ընթերցողին յօդուածիցս մի կէտ պոկած ցոյց տալով՝ ուզում էք հաւատացնել, որ ամբողջ յօդուածը սխալ է։ Ընդհակառակը, Ձեր այդ վարմունքով ցոյց տուիք, որ անձեռնհաս էք լուրջ ու հիմնաւոր կերպով պատասխանել յօդուածիս գլխաւոր կէտերին։

Ձեր յօդուածից ուշադրութեան էի առել այս բառերը. «լոբի, սիսիռ... գծիկներ, շրջանակներ»... (սիսեռ բառից յետոյ պէտք է լինէր բազմակէտ, չգիտեմ ինչու տպագրութեան միջոցին դուրս է մնացել)։ Դուք զննական միջոցների տեսակները համարելով՝ առաջին տեսակի մէջ յիշել էիք լոբի և այլն. երկրորդ տեսակից՝*

) Նոր-Դպրոցի № 2-ում տպուած իմ յօդուածի մէջ առաջ են եկել հետևեալ սխալները 71-րդ երեսում, 4-րդ տողում «անպատրաստէ» բառի տեղ պէտք է լինէր «պատրաստ է», 66-րդ երեսում "թուաբանութեան մութ աշխարհն է» դրա տեղ պէտք է լինէր «թուաբանութեան մութ հասկացողութեան աշխարհն է»։

գծիկներ, շրջանակներ և այլն։ Շարունակութեան մէջ ասում էր, «երկրորդ տեսակից միայն մօտ 200-ի չափ գործիքներ և մեքենաներ կան։ Միթէ այդ նախադասութիւնից չի հետևում, որ եթէ առաջին տեսակն (լոբի, սիսեռ) էլ հաշուենք, գործիքների, մեքենաների թիւը աւելի կը բարձրանայ։ Տրամաբանօրէն մտածողը այդպէս կը հետևցնի։

Երբ այժմ պարզուեց, որ յօդուածիս յիշեալ կտորը սխալ չէ, այս դէպքում պ. Տէր-Միրաքեանը իր նամակի վերջին տողերը այսպէս կձևակերպէ. «Աւելորդ չեմ համարում պ. ընդդիմախօսի (Արարատեանի) շօշափած ուրիշ կէտերին պատասխանել, որոնք վերաբերում են ինձ (պ. Տէր-Միրաքեանին) և վերոյիշեալի պէս ճշմարտութիւններ են»։

Մինչև յօդուածիս տպագրուելը կարելի էր նամակով դիմել ինձ, իսկ տպագրուելուց յետոյ, ես ինձ համարում եմ ընթերցողների շարքը։ Ընթերցողները սպասում էին յօդուածի, իսկ մասնաւոր Ձեր ինձ ուղղած նամակը ընթերցողներին բաւարարութիւն չի տալիս։

Ճ. Զ. Արարատեան

ԼՈՒՐԵՐ

Մայիսի 2-ին Մոսկուայում կատարուեց քանքարաւոր բանաստեղծ Ալէքսանդր Ծատուրեանի գրական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը մեծ հանդիսով։ Մոսկուայի հասարակութիւնը պ. Ծատուրեանին նուիրաբերել է մի խոշոր գումար։ Խմբագրութեանս կողմից իբր ներկայացուցիչ յօբելեանին ներկայ էր Թերթիս Մոսկուայից աշխատակից պ. Նիկողայոս Տէր-Մանուէլեանը։

Կ. Պոլսի Ազգային ժողովի խառն ժողովը «Լուսայ»-ի մէջ արտայայտած բողոքին պատասխանել է կողմնակի կերպով։ Նա գտել է, որ Օրմանեան սրբազանի վրայ բարդած «դրամական գեղծումների» մէջ մինչև այժմ ոչ մի կէտ չապացուցուեց, ուստի և որոշել է նորան կոչել որևէ պատասխանատու պաշտօնի։ Ուրեմն սր. Օրմանեանը այժմ 'ի հարկէ, երբ նրանից որևէ վտանգ չունի ազգը, անմեղ է համարուած դրամական խնդիրներում։ Բայց մենք դարձեալ մի նոր բան կասենք. որ նորին սրբ. անմեղ է նաև այն մեղադրանքի մէջ, որ իբր թէ նա Հաագի կոնֆէրանսին հեռագիր է տուել՝ նորան ներկայացող հայ պատգամաւորութիւնը չհամարելու ամբողջ Թիւրքիայի հայութեան ներկայացուցիչ։ Այդ էլ սուտ է և շինծու։ Ճշմարտութիւնն այս է, որ երբ Կ. Պոլսի մի քանի նշանաւոր ազգայիններ տեսնում են, որ հայ պատգամաւորութեան՝ Հաագի կոնֆէրանսին ներկայանալովը կարող է գրգռուել Համիդը և հայերի նոր կոտորածի առիթ տալ, շտապել են պատրիարք Օրմանեանի մօտ և իրանց նախապէս խմբագրած հեռագիրը ներ-